ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.10.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/249

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-2021/7-1-ԵՊԲՀ» գնանշման հարցում, շինանյութի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15022-2021 գրությամբ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 10.09.2021թ.-ի թիվ 09/1361 գրության հիման վրա, 16.09.2021թ.-ին «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 16.09.2021թ.-ին:

16.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/249 համարի ծածկագիրը:

28.09.2021թ.-ին և 18.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.10.2021թ.-ին:

2. **<u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 10.09.2021թ.-ի թիվ 09/1361 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021 թվականի փետրվարի 19-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊ /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքվել է շինանյութի գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագիրը: Պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավորվել է 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված թվով երկու տեսակի ապրանքները:

Պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո, Ընկերության կողմից ապրանքի մատակարարում չի իրականացվել: Պատասխանատու ստորաբաժանման

ղեկավարի կողմից, Ընկերությունը պատշաճ ծանուցվել է ապրանքի մատակարարման վերջնաժամկետի հիշեցման մասին և սահմանվել է լրացուցիչ ողջամիտ ժամկետ ապրանքի մատակարարումը իրականացնելու համար: Սակայն, ապրանքի մատակարարում չի իրականացվել և Ընկերությունը բանավոր հայտնել է ապրանքի մատակարումից հրաժարվելու մասին:

Հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ Համալսարանը լուծել է Ընկերության հետ կնքված վերոհիշյալ պայմանագիրը:

Հինք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ սույն թվականի սեպտեմբերի 10-ին Համալսարանը չմատակարարված ապրանքի մասով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում, ինչպես նաև ուղարկել է Ընկերության էլեկտրոնային փոստին:

Քանի որ թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագիրը լուծվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունների գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան Ձեզ ենք տրամադրում տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ հիմքերը՝ թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագիրը և պայմանագիրը լուծելու մասին Համալսարանի ծանուցումը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-42/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 16.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15022-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/249 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 10.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 09.09.2021թ.-ի թիվ 09/1339 ծանուցման համաձայն՝ 2021 թվականի փետրվարի 19-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև կնքված շինանյութի գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագրի Մասնակիցը պարտավորվել է 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված թվով հինգ տեսակի ապրանքներ:

Պայմանագրով սահմանված վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մարտի 16-ին: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 14.07.2021թ.-ին գրավոր սահմանվել է նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 19.07.2021թ.-ը ներառյալ, որի մասին

Մասնակցին պատշաճ ծանուցվել է: Սակայն, «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի կողմից մատակարարումը կրկին չի իրականացվել և պատասխանատու ստորաբաժանմանը Մասնակցի կողմից բանավոր տեղեկացվել է ապրանքի մատակարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 19.02.2021թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15022-2021 գրությամբ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը

կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից,

օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 ախատանքային օրվա ընթացքում:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 10.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 09.09.2021թ.-ի թիվ 09/1339 ծանուցման համաձայն՝ 2021 թվականի փետրվարի 19-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև կնքված շինանյութի գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագրի Մասնակիցը պարտավորվել է 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված թվով հինգ տեսակի ապրանքներ:

Պայմանագրով սահմանված վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մարտի 16-ին: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 14.07.2021թ.-ին գրավոր սահմանվել է նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 19.07.2021թ.-ը ներառյալ, որի մասին Մասնակցին պատշաճ ծանուցվել է: Սակայն, «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի կողմից մատակարարումը կրկին չի իրականացվել և պատասխանատու ստորաբաժանմանը Մասնակցի կողմից բանավոր տեղեկացվել է ապրանքի մատակարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 19.02.2021թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով

Պայմանագրի դրույթները, միակողմանի 09.09.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 10.09.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց

հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15022-2021 գրությամբ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/249 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**